

Երևանի պետական համալսարանի
կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2017 թ. հունիսի 22-ին կայացած թիվ 8 նիստի

Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի 39 անդամներից նիստին ներկա էին 33-ը:

Օրակարգում՝

- Մրցույթ
- Պրոֆեսորի գիտական կոչման շնորհման հարցը
- Ուսումնամեթոդական ձեռնարկների տպագրման երաշխավորման հարցը
- ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի հայտարարած §ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ՀՀՌՀ -2018՝ մրցույթին մասնակցելու համար հայտ ներկայացրած նախագծերի երաշխավորության հարցը
- Ուսումնական ծրագրերի դասընթացների գնահատման մեթոդաբանությունը
- Ընթացիկ հարցեր

Մինչ գիտխորհրդի հիմնական հարցերին անցնելը՝ գիտխորհրդի անդամները ոտնկայս մեկ բուպե լռությամբ հարգեցին կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր Սոֆիկ Պետրոսի Հովհաննիսյանի հիշատակը:

• **Մրցույթ**

ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան Է.Ս. Գևորգյանի հաղորդումը՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի (1 տեղ), բուսաբանության և սնկաբանության (2 տեղ), ամբիոններում 1.0 դրույքաչափով դոցենտի պաշտոնի և բուսաբանության և սնկաբանության ամբիոնում (1 տեղ)

ասիստենտի պաշտոնի թափուր տեղերի համար հայտարարված մրցույթին մասնակցելու մասին:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր Ֆ.Դ. Դանիելյանը: Նա ներկայացրեց տեղեկություններ ընտրվող թեկնածուների մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ նախագահ^a կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Լ.Ա.Նավասարդյան, անդամներ՝ կենդանաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ. Մ.Ս.Առաքելյան և կենդանաբանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Ա.Ֆ.Կարապետյան:

ԼՍԵՑԻՆ՝ հաշվիչ հանձնաժողովի նախագահ Լ.Ա.Նավասարդյանի հաշվետվությունը քվեարկության արդյունքների մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. հաստատել փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները՝

Սեդա Վիկտորի Մարության ՝ կողմ՝ 28, անվավեր՝ 2,

Իրեն Վաչագանի Շահազիզյան ՝ կողմ՝ 30,

Ինեսա Մակեդոնի Էլոյան ՝ կողմ՝ 28, անվավեր՝ 2,

Նարինե Հմայակի Զաքարյան ՝ կողմ՝ 28, անվավեր՝ 2

2. Սեդա Վիկտորի Մարությանին համարել ընտրված կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնում դոցենտի պաշտոնում,

Իրեն Վաչագանի Շահազիզյանին համարել ընտրված բուսաբանության և սնկաբանության ամբիոնում դոցենտի պաշտոնում,

Ինեսա Մակեդոնի Էլոյանին համարել ընտրված բուսաբանության և սնկաբանության ամբիոնում դոցենտի պաշտոնում,

Նարինե Հմայակի Ջաքարյանին համարել ընտրված բուսաբանության և սնկաբանության ամբիոնում ասիստենտի պաշտոնում

- **Պրոֆեսորի գիտական կոչման շնորհման հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի ամբիոնի դոցենտ, կ.գ.դ. Գալինա Գեորգիի Հովհաննիսյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենսաբանության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ֆ.Դ. Դանիելյանը (կից ներկայացվում է մրցութային հանձնաժողովի եզրակացությունը):

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հիմք ընդունելով ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի II 5Բ կետը, երաշխավորել Գ.Գ.Հովհաննիսյանին՝ պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու համար:

- **Ուսումնամեթոդական ձեռնարկների տպագրման երաշխավորման հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ կենդանաբանության ամբիոնի պրոֆեսոր Է. Մ. Եղիազարյանի ներկայացրած «Հայաստանի թռչունների համառոտ դաշտային ուղեցույց» ուսումնական ձեռնարկի տպագրության հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ Կենդանաբանության ամբիոնի ամբիոնի վարիչ՝ կ.գ.դ., դոցենտ Մ.Ս.Առաքելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել «Հայաստանի թռչունների համառոտ դաշտային ուղեցույց» ուսումնական ձեռնարկը հրատարակման:

ԼՍԵՑԻՆ՝ կենդանաբանության ամբիոնի աշխատակիցներ՝ Տ.Ա.Հայրապետյանի, Ա.Վ.Ասլանյանի, Գ.Յու.Պապովի, Ա.Ս.Ղազարյանի ներկայացրած «Հայաստանի ողնաշարավոր կենդանիների անվանումների քառալեզու բառարան» ուսումնական ձեռնարկի տպագրության հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ կենդանաբանության ամբիոնի ամբիոնի վարիչ՝ կ.գ.դ., դոցենտ Մ.Ս.Առաքելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել «Հայաստանի ողնաշարավոր կենդանիների անվանումների քառալեզու բառարան» ուսումնական ձեռնարկը հրատարակման:

• ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի հայտարարած ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ՀՀՈՀ – 2018 մրցույթին մասնակցելու համար հայտ ներկայացրած նախագծերի երաշխավորության հարցը

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել հետևյալ նախագծերը մրցույթին մասնակցելու համար

1. Ղեկավար՝ կ.գ.դ. Մ.Ս.Առաքելյան՝ «Ժայռային մողեսների կուսածին տեսակների մեյոզի ուսումնասիրությունը և միջտեսակային հիբրիդիզացման արդյունքում տեսակառաջացման հնարավորության գնահատումը»

2. Ղեկավար՝ կ.գ.թ. Ա.Ֆ.Կարապետյան՝ «Ուրբանիզացված տարածքների և տեխնածին լանդշաֆտների ադոտովածության գնահատումը կենսացուցիչների միջոցով»

3. Ղեկավար՝ կ.գ.թ. Ա.Ս.Ղազարյան՝ «Հայաստանի և հյուսիսային Կովկասի որոշ ձեռքաթևավորների գենետիկական և ուլտրաձայնային բազմազանության համեմատական ուսումնասիրությունը»

4. Ղեկավար՝ կ.գ.թ. Ս.Ա. Աղայան՝ «Հայաստանում Անոֆելես ցեղի մոծակների և նրանցում մալարիայի մակաբույծների հետազոտություն՝ հետազա բռնկումների կանխարգելման համար»

5. Ղեկավար՝ կ.գ.թ. Լ.Ա. Մինասբեկյան՝ «Հայաստանի դիպլոիդ և պոլիպլոիդ ցորենազգիների Ա գենոմի վերակազմավորումը ադապտացիայի և էվոլյուցիայի ընթացքում»

6. Ղեկավար՝ կ.գ.դ. Ս.Գ. Նանագյուլյան՝ «Հայաստանի և Ռուսաստանի բնության պահպանվող տարածքների միկոբիոտան՝ սնկերի կենսաբազմազանության ուսումնասիրում և համեմատական վերլուծություն»

7. Ղեկավար՝ կ.գ.թ Ա.Ա. Նեբիշ՝ «Հայաստանի և Ռուսաստանի խաղողի քիչ տարածված սորտերի ֆենոտիպային և գենոտիպային ուսումնասիրումը գենետիկական փոխկապվածության բացահայտման և բիոտիկ կայունության գեների հայտնաբերման համար»

8. Ղեկավար՝ կ.գ.թ Փանոսյան Հ.Հ. «Հայաստանի և Ռուսաստանի (Կամչատկայի) երկրաջերմային աղբյուրների մանրէային համակեցությունների նոր թերմոֆիլ արքեաները, դրանց նյութափոխանակությունը և էկոլոգիական գործառույթը»

9. Ղեկավար՝ Մ.Թ. Պետրոսյան՝ «Բուսական լուծամզվածքների ազդեցությունը տարբեր հակաբիոտիկների նկատմամբ մանրէների կայունության վրա »

10. Ղեկավար՝ կ.գ.թ. Մարգարիտ Թորգոմի Պետրոսյանի առաջարկած «Բուսական լուծամզվածքների ազդեցությունը տարբեր հակաբիոտիկների նկատմամբ մանրէների կայունության վրա»:

Գիտական խորհրդի նախագահ՝
ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆ.



Է.Ս.Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ դոցենտ



Ա.Ֆ.Կարապետյան